

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

**ԴԻՊԼՈՄԱՏԱԿԱՆ ՌԵՍՈՒՆՆԵՐԻ ԻՍՏԱՏԱԿԱՌՈՒ ՑՎԱՃՔԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒ ՌԵՍՈՒՆՆԵՐԸ**
(անգլ ևլ եզոլ տպագիր և առցանց լրագրերի նյ ու թի հիման վրա)

Ժ.02.07 - «Գերմանական լ եզոլ ներ» մասնագիտոլ թյ ամբ
բանասիրական գիտոլ թյ ոլ ն ների թեկնաճ ոլ ի գիտական
աստիճանի հայ ցման ատենախոս ոլ թյ ան

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսություն թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուկոնովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., դոցենտ Ս.Ա.
Մարգարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Ա.Ա.
Սիմոնյան
Բ.Գ.Թ., դոցենտ Գ.Ռ.
Յարոնյան

Առաջատար կազմակերպող ուն՝ Խ. Աբովյանի անվան
հայկական պետական
մանկավարժական
համալսարան

Ատենախոսություն պաշտպանությունը կայանալու է 2017թ. մարտի 29-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ ԲՈՅ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. փետրվարի 27-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
Բ.Գ.Դ., պրոֆեսոր՝  Ե.Լ. Երզնկյան

Հարաւորութիւն աշխարհի լեզվական պատկերում խիստ կարևոր է անգլերենի նորաստեղծ և նորահայտ բառամթերքի վերհանումը: Յուրաքանչյուր տարի ի հայտ են գալիս հարյուրավոր նոր բառեր և իմաստային նորաբանութիւններ, որոնց գերակշիռ մասը կարճ ժամանակամիջոցում գտնուվում են անգլերեն բառարաններում: Իսկ լրագրերում մեկնաբանվում են հասարակական կյանքի բոլոր բնագավառներին վերաբերող խնդիրներ և ամենից հաճախ են գործածվում և/կամ վերաստեղծվում դիպվածային բառեր՝ ընթերցողներին ուշադրութիւնն առնելու և կամ այն խնդիրն սևեռելու համար: Դիպվածային բառերի ստեղծումը բացառիկ և ճկուն ստեղծագործական միտք ունեցող, լեզվիմացութեամբ բարձր մակարդակ դրսևորող լրագրող-հեղինակի՝ խոսքաշարի կառուցման մեջ ինքնատիպութեամբ դրսևորման հետևանք է:

Աշխատանքի **արդիականութիւնը** պայմանավորված է լրագրանյութերում մշտապես կիրառվող նոր բառերի բազմաձևեցման կարգին հետազոտութիւններին և ժամանակակից անգլերենի բառապաշարի հարստացման միջոցների վերհանման պահանջով:

Ատենախոսութեան **գիտական նորույթն** այն է, որ աշխատանքն ուրույն փորձ է հնարավորինս համակողմանի քննութեան ենթարկել լրագրանյութերից քաղված ժամանակակից անգլերենի դիպվածային բառերի իմաստակառուցվածքային առանձնահատկութիւնները (անհրաժեշտութեան դեպքում անդրադարձ կատարելով նաև դրանց գործաբանական, ճանաչողական և ոճական յուրահատկութիւններին): Նոր է նաև անգլերենի օրինաչափութեան կառուցման խախտումով կազմված դիպվածային բառերի վերհանումը լրագրանյութերից և առանձնացված դիպվածային բառային միավորների՝ դիպվածային կարգավիճակում մնալու, և/կամ՝ դրանց հանրայնացման և լեզվի համակարգում ամրապնդման հատկորոշումը՝ անգլերեն միալեզու բացատրական բառարանների և կորպուսային շտեմաբանների լեզվանյութի հիման վրա:

Որպես ատենախոսութեան **լեզվանյութ** ծառայել են անգլալեզու տպագրի և առցանց թերթերից և ամսագրերից քաղված դիպվածային բառային միավորները: Աշխատանքում առանձնացված օրինակները մեծամասամբ քաղված են լրագրերի ոչ տպագրի՝ առցանց տարբերակներից, քանի որ համակարգչային վիրտուալ խոսույթում գերտեստներկայացնող թերթերի և ամսագրերի առցանց տարբերակները բովանդակում են ավելի շատ տեղեկույթ՝ տպագրի գրավոր հրատարակագրութեան համեմատ:

Աշխատանքի **նպատակն է** վերլուծութեան ենթարկել անգլալեզու թերթերից և ամսագրերից դուրս բերված դիպվածային բառերը՝ իմաստային և կառուցվածքային

առանձնահատկություններին դիտանկյունից, վերլուծել իրականության կարգայնացման մեխանիզմները և էզզվական կադասարման միջոցները:

Այս նպատակին հասնելու համար անտեսախոսություն մեջ առաջ ադրվել են հետևյալ **խնդիրները**:

- համակողմանի վերլուծության ենթարկել «նորաբանության» և «դիպլոմատության» եզրույթների ըմբռնումները էզզվաբանական գրականության մեջ,
- քննության առնել բառատեղծման խնդիրները անգլերենում և համակարգել բառատեղծումը խաթարող գործոնները,
- վերլուծել և հատկորոշել անվանողական միջոցների ընդհանուր պատկերը և դասակարգել դրանք,
- վեր հանել լրագրանյութերում անգլերենի օրինաչափության ներքին խախտումով կազմված դիպլոմատային բառերը և հատկորոշել դրանց զարգացումը,
- բացահայտել դիպլոմատային բառերի խոսքիմասային պատկանելությունը և դրանց կիրառության ներքին ծավալը,
- սահմանել դիպլոմատային բառերի պատկանելությանը տարբեր բառիմաստային և/կամ թեմատիկ խմբերի,
- սահմանել դիպլոմատային բառերի գործառույթները,
- վերլուծել և մշակել դիպլոմատային բառերի առավել ճյուղավորված բառակազմության դեպքերը,
- որոշել դիպլոմատային բառերի հետագա դիպլոմատային կարգավիճակը (բառը մնում է դիպլոմատային կարգավիճակում, թե՞ հանրայնացվում է և ամրապնդվում է էզզվի համակարգում):

Էզզվաբանական վերլուծության **մեթոդների** մեր ընտրությանը բխում է ուսումնասիրվող նյութի բնույթից և նպատակից: Ներկա աշխատանքում կիրառվել են բադարիչային վերլուծության, նկարագրական, վիճակագրական, համաժամանակյա և տարաժամանակյա ուսումնասիրության մեթոդները (ածանցները վերլուծելիս անհրաժեշտությանը և էզզացվել դիմել տարաժամանակյա քննության՝ դրանց ծագման աղբյուրները պարզելու համար):

Աշխատանքի

տեսական

նշանակությունը

պայմանավորված է նրանով, որ տվյալ հետազոտության արդյունքները կարող են նպատակել անգլերենի բառաթերքի նորաբանական շերտի իմաստակառուցվածքային հետագա ուսումնասիրության ու ներքին իրականացմանը:

Անտեսախոսությունն ու նի որոշակի **գործնական արժեք**: Ուսումնասիրության մեջ ստացված արդյունքները կարող են ունենալ մի շարք գործնական կիրառության ներքին

օգտագործվելով բառագիտության, իմաստաբանության և տեքստի վերլուծության դասընթացներում, ինչպես նաև գործնական ձեռնարկներ և բառարաններ կազմելիս:

Աշխատանքի **կառուցվածքը** բխում է ատենախոսության մեջ արծարծվող խնդիրներից. այն բաղկացած է ներածականից, երեք գլուխներից, եզրակացությանից, գրականության ցանկից և 2 հավելվածից:

Ներածության մեջ հիմնավորվում են աշխատանքի նպատակներն ու մեթոդները, թեմայի արդիականությունը, գիտական նորոլյթը, տեսական և գործնական արժեքը:

Առաջին գլուխը, որը վերնագրված է **«Նորաբանության ներքի և դիպլոմաբանության ներքի տեսական հիմքերը և եզրաբանական գրականության մեջ»**, բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում (**«Նորաբանության ներքի և դիպլոմաբանության ներքի ուսումնասիրության նը և եզրաբանական գրականության մեջ»**) դիտարկվում են նորաբանության ներքի և դիպլոմաբանության ներքի վերաբերյալ արևմտյան, խորհրդային և հայ տեսաբանների ուսումնասիրության ներքը:

Մեր խնդրո առարկա **դիպլոմաբանության ն** եզրույթը և այնորեն կիրառվում է և եզրաբանական գրականության մեջ, սակայն դիպլոմային բառերի ընդհանրական սահմանում չկա: Սույն ատենախոսության մեջ մենք ընդունում ենք Պ. Յարյովի, Թ. Ղարագուլյանի և Դ. Քրիսթալի հայեցակարգերը: Ըստ Պ. Յարյովի՝ «դիպլոմաբանության ներքը ստեղծվում են տվյալ դեպքի, համատեքստի համար, մեծամասամբ վերաստեղծվում են և վերածվում նորաբանության ներքի: Երբեմն նախքան բառարաններում զգտեղվելը դրանք ձեռք են բերում գործածման բարձր հաճախականություն, հետևապես, քիչ հավանական է պարզել՝ արդյո՞ք այս կամ այն բառը առաջին անգամ է կիրառվում»¹: Թ. Ղարագուլյանի դիտանկյունից՝ «դիպլոմաբանության ներքը տարբերվում են նորաբանության ներքից նրանով, որ դրանք խոսքի իրողության ներք են և դիպլոմաբանության ներք են այնքան ժամանակ, քանի դեռ չեն զգտեղվել բառարաններում և չեն ամրագրվել և եզրվում»²: Ըստ Դ. Քրիսթալի՝ «յուրաքանչյուր նորաստեղծ բառ (նորաբանության ն) դիպլոմային բառ է, քանզի բյուրավոր նորաստեղծ և յուրացված միավորներից սակավաթիվ նորաբանության ներք են մուտք գործում և եզու:

¹ Царев П.В. Потенциальная лексика в современном английском языке // Иностранные языки в школе, № 1, М., 1978, стр. 22.

² Ղարագուլյան Թ. Դիպլոմային և արտեսցիալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծական համակարգում // Լեզվի և ոճի հարցեր, № 7, Երևան, 1983, էջ 202:

Դիպլոմային բառը լեզվական ձև է, որը խոսողը որևէ առիթով ստեղծում է՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար <...> Դիպլոմային կազմույթնունները երբեմն լայնորեն տարածում են գտնում լեզվակիր հանրության մեջ, այդպիսով՝ դիպլոմաբանություններից առաջ են գալիս նորաբանությունները³:

Յտուապես, սույն ատենախոսության մեջ քննության առնվող դիպլոմային բառերը պայմանականորեն ենք համարում դիպլոմային, քանի որ բացառված չէ, որ անգլալեզու մամուլի էջերում կամ առցանց տարաբնույթ հրատարակումներում արձանագրված լինեն տվյալ բառերի ավելի վաղ գործածություններ:

Առաջին ենթալիտում ներկայացվում են դիպլոմաբանությունների ուսումնասիրության ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից մոտեցումներ: Ժամանակակից տեսաբանների առաջադրած տեսություններում նոր բառերն ուսումնասիրվում են գործաբանական և ճանաչողական տեսանկյունից: Յադորդակցական-գործաբանական դիտանկյունից՝ լեզվական նորակազմությունների երևան գալը պայմանավորված է նոր բառերի միջոցով լեզվակիր հանրության մեջ որոշ հասարակական կարևորություն ունեցող իրականություններ անվանելու և ամրապնդելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև՝ նրանով, թե ինչ գնահատական է տրվում այս կամ այն երևույթին կամ իրադարձությանը, ինչ նպատակադրումով է առարկան կամ երևույթը նոր անվանումով ներկայացվում խոսույթում: Իսկ խոսքաարում նոր լեզվամիավորների ընտրությունը և տեղին գործածումը պայմանավորված է գրուցակցի վրաներգործելու միտմամբ:

Յ. Շմիդն իր «*New Words in the Mind: Concept Formation and Entrenchment of Neologisms*» հոդվածում քննում է լեզվի համակարգում նոր բառերի ամրապնդումը՝ ճանաչողական և գործաբանական դիտանկյունից⁴: Յեղինակը փաստում է, որ «ճանաչողական տեսանկյունից՝ խոսքաարում նոր բառերը կազմվում են կենսունակ բառակազմական կադապրներով, որոնք ամրագրված են լեզվում: Գործաբանական տեսանկյունից՝ նորակազմությունների իմաստային հստակությունը պայմանավորված է համագործակցության սկզբունքով: Յասցեագրողը փորձում է հստակ ձևակերպել

³ Տե՛ս Ahmad Kh. Neologisms, Nonces and Word Formation // Lexicological Phenomena of Lexicographical Relevance, Proceedings of Euralex, 2000, p. 711.

⁴ Schmid H. New Words in the Mind: Concept-Formation and Entrenchment of Neologisms // Anglia Anglia - Zeitschrift für englische Philologie, Volume 126, Issue 1, 2008.

հասցեատիրոջն ուղղված հաղորդումը: Դա է պատճառը, որ նոր բառը կազմվում է լեզվում արդեն առկա բառակազմական կաղապարների հիման վրա: Ասելիքն առավել ասես հստակ ձևակերպել ու արդյունքում հաղորդակցվողները նույնիսկ չեն նկատում, որ լեզվում ստեղծվել է նոր բառ»⁵:

Ամփոփելով առկա տեսակետները՝ կարող ենք փաստել, որ դիպվածք անուծությունները և/կամ նորաբանությունները, որոնք, թեպետ, ստեղծվում են լեզվում առկա բառակազմական կաղապարների հիման վրա կամ լեզվի օրինաչափությունների խախտումով, հավանում են առավել արտահայտիչ, պատկերավոր, երբեմն նաև՝ հուզական, գնահատողական ազդեցություն, որն էլ, բնականաբար, ոճական արժեքն ապահովող գործոն է: Իսկ ոճական արժեքը, այն է՝ արտահայտչականություն, գնահատողականություն, հուզականություն, ապահովում է գործաբանական այն ներգործությունը, որը միտված է ընթերցողին հետաքրքրելու և ուշադրությունը առավել ազույնս գրավելու խնդրին:

Երկրորդ ենթազև խումը (**«Բառակազմական կենսունակությունը և այն խոչընդոտող գործոնները»**)

փորձ է արվում համակողմանի վերլուծություն ան ենթարկել բառակազմական կենսունակությունը խաթարող հնչույթաբանական, հիմաստաբանական, ձևաբանական, գեղագիտական և գործաբանական գործոնները: Բառատեղծման սահմանափակումների համակարգում *հնչույթաբանական գործոնները* կապված են բաղադրող հիմքի և վերջավորություն հնչույթաբանական հատկանիշների հետ, *ձևաբանական գործոնները*՝ բաղադրող հիմքի ծագման հետ (որոշ ածանցներ ավելանում են միմիայն բնիկ կամ միմիայն փոխառյալ հիմքերին), *հիմաստաբանական գործոնները*՝ բաղադրող հիմքի և ածանցի հիմաստային համատեղելիության, հոմանշային շարքերում նույնական հիմակարտահայտող բառերի հետ, *գեղագիտական գործոնները* վերաբերում են ածանցյալ բառերի՝ բարեհունչ և/կամ անբարեհունչ կազմությունները դիտվելուն, *գործաբանական գործոնները* սահմանում են շրջապատող միջավայրի որևէ երևույթ կամ առարկա անվանելու անհրաժեշտությունը՝ կախված խոսքային իրադրություններից:

Երկրորդ գլուխը, որը վերնագրված է **«Ածանցավոր դիպվածային բառերի հիմաստաառուցվածքային առանձնահատկությունները»**, բաղկացած է երեք ենթազև խից:

⁵ Schmid H. New Words in the Mind: Concept-Formation and Entrenchment of Neologisms // Anglia Anglia - Zeitschrift für englische Philologie, Volume 126, Issue 1, 2008, p. 16.

Առաջին ենթազլխում («Նախածանցավոր դիպվածային բառերը և դրանց զարգացումը») վերլուծում ենք նախածանցման եղանակով կազմված դիպվածային բառերի հիմաստակառուցվածքային յուրահատկությունները և ուսումնասիրում դրանց հանրայնացման և/կամ ամրակայման դեպքերը և եզվի համակարգում: Այստեղ ներկայացվում են *anti-, de-, i-, out-, over-, pre-, un-, under-, gastro-, micro-, multi-, nano-, neuro-, omni-, self-, super-, uber-, xeno-* նախածանցներով կազմված դիպվածային բառերը:

Ատենախոսության մեջ քննության առնված դիպվածային բառերը ներկայացրել ենք 6 բառիմաստային խմբերում: Վերլուծությունը ցույց է տալիս, որ նախածանցավոր դիպվածային բառերում գերակշռում են «*Բժշկություն և, առողջություն և մարզած ներ (Medicine, Health, and Sports)*» բառիմաստային և/կամ թեմատիկ խմբին պատկանող բառերը: Ածանցման կաղապարներից ամենակենսունակը «*նախածանց+ածանցավոր բառ*» կաղապարն է: Քննության առնված նախածանցավոր դիպվածային բառերի (26) գերակշիռ մասը գոյականական կազմություններ են (19), սակավաթիվ են ածականները (6) և բայերը (1):

Հետաքրքիր է նշել, որ այս ենթազլխում քննության առնված *superbowl* բառային միավորը նույնահունչ է անգլերեն բառարաններում առկա (*the Super Bowl* բառի հետ, բայց տարբեր հիմաստով)։

Օրինակ՝ *You can carry your superbowl with your hand through the handles and the bag resting on your hip like Victoria Beckham, but we reckon that could get uncomfortable* (Grazia 20 Aug 2012).

Վերը նշված օրինակում *super-* նախածանցով բաղադրված բառը գոյականական կազմությունն է և համատեքստում իրացնում է «*կեզլախաղի/բոուլինգի գնդակի ձև ունեցող կանացի ձեռքի պայուսակ*» բառիմաստային տարբերակը: Բնագրի ***with your hand through the handles and the bag resting on your hip*** հատվածն է նախատում բառիմաստի վերհամանը:

Ուսումնասիրված բառարանային (*Oxford Dictionaries Online, Merriam-Webster Dictionary Online, Cambridge Dictionaries Online, Longman Dictionary of Contemporary English*) և կորպուսային շտեմարանների (*Corpus of Contemporary American English (COCA), Corpus of Global Web-Based English (GloWbE)*) և եզվանյութի քննությունը թույլ է տալիս արձանագրել, որ նախածանցավոր դիպվածային բառերը որոշ դեպքերում ձեռք են բերում գործածման բարձր հաճախականություն և առցանց հրապարակումների շնորհիվ, որոշ դեպքերում էլ գրանցվում են անգլերեն միաբեզու բացատրական բառարաններում: Այսպես, այս ենթազլխում քննության առնված 26 նախածանցավոր բառերից 7-ը

ընդգրկվել են նշված բառարաններում⁶: Ըստ ժամանակակից անգլերենի երկու կորպուսների (COCA, GloWbE) ընձեռած տվյալների՝ ամենամեծ հաճախականությունն ունի *anti-vaccine* բառային միավորը (GloWbE-372, COCA-28)⁷: Նախածանցավոր 26 բառերից 16-ը բացակայում են տվյալ կորպուսներում, իսկ *superbowl* բառն ընդգրկված չէ նշված կորպուսներում՝ «կանացի պայ ու սակ» նշանակությամբ:

Երկրորդ ենթազխում («Վերջածանցավոր դիպածային բառերը և դրանց զարգացումը») ուսումնասիրվում են վերջածանցման եղանակով կազմված դիպածային բառերի իմաստակառուցվածքային առանձնահատկությունները և հատկորոշվում է դրանց հանրայնացման և/կամ ամրակայման դեպքերը և եզրվի համակարգում: Ե՛վ առաջին, և՛ երկրորդ ենթազխում խնդրում նոր իրականությունների բառայնացման միջոցները խմբավորել ենք ըստ ածանցման կաղապարների, ապա ուսումնասիրությունն իրականացրել անգլալեզու լրագրերից քաղված օրինակների հիման վրա: Այստեղ ներկայացվում են *-er, -ie, -ilis, -ing, -ization, -ise/-ize, -ish, -less, -ology, -zilla, -cide* վերջածանցներով կազմված դիպածային բառերը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջածանցավոր դիպածային բառերում գերակշռում են «Մարդիկ և հասարակություն» (*People and Society*)» բառիմաստային և/կամ թեմատիկ խմբին պատկանող բառերը: Ածանցման կաղապարներից ամենակենսունակը «գոյականվերջածանց» կաղապարն է: Քննության առնված վերջածանցավոր դիպածային բառերի (21) գերակշիռ մասը գոյականակա կազմություններ են (18), սակավաթիվ են ածականները (2) և բայերը (1):

Ուսումնասիրված բառարանային և կորպուսային շտեմարանների և եզրվանյութի քննությունը թույլ է տալիս արձանագրել, որ վերջածանցավոր դիպածային բառերը ևս որոշ դեպքերում ձեռք են բերում գործածման բարձր հաճախականություն՝ առցանց հրապարակումների շնորհիվ, որոշ դեպքերում էլ գրանցվում են անգլերեն միալեզու բացառական բառարաններում: Ստացված տվյալները

⁶ <http://www.oxforddictionaries.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://dictionary.cambridge.org> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.ldoceonline.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.merriam-webster.com> 30.07.2016-ի դրությամբ.

⁷ Davies M. (2008-) *The Corpus of Contemporary American English (COCA): 520 million words, 1990-present*. Available online at: <http://corpus.byu.edu/coca/> 30.07.2016-ի դրությամբ.

Davies M. (2013) *Corpus of Global Web-Based English: 1.9 billion words from speakers in 20 countries (GloWbE)*. Available online at: <http://corpus.byu.edu/glowbe/> 30.07.2016-ի դրությամբ.

վկայում են, որ այս ենթագլխում ուսումնասիրված 21 վերջածանցավոր բառերից 6-ը գետեղվել են անգլերեն միալեզու բացատրական բառարաններում⁸: Կորպուսային ուսումնասիրության մեթոդով այստեղ ևս վեր ենք հանել վերջածանցավոր դիպվածային բառերի հաճախականության վիճակագրական տվյալները՝ ըստ ժամանակակից անգլերենի COCA և GloWbE կորպուսների: Ըստ նշված կորպուսների՝ ամենամեծ հաճախականություն ունեն *walker* (COCA – 15557, GloWbE - 15557) և *creeping* (COCA - 2372, GloWbE - 2372) բառերը, իսկ *avozilla*, *buffling*, *carbicide*, *contractualise*, *dadding*, *doorer*, *highlining*, *Quidditching*, *selfie*, *Sindie*, *trolleyology* և *youthful-ish* բառերը բացակայում են նշված կորպուսներում⁹: Փաստենք, որ *adorabilis*, *creeping*, *ghosting*, *Kipper*, *milking*, *owling* և *walker* բառերը COCA և GloWbE կորպուսներում ներկայացված համատեքստերում այլ գործածություն ունեն և չեն իրացնում աշխատանքում առանձնացրած բառիմաստային տարբերակները:

Երրորդ ենթագլխում (**«Բառատեղծման սահմանախախտումներով կազմված դիպվածային բառերը և դրանց զարգացումը»**) քննության առարկա ենք դարձրել անգլերենի օրինաչափությունների խախտումով կազմված դիպվածային բառերը: Այստեղ ևս ուսումնասիրել ենք վերջիններիս հանրայնացման և/կամ լեզվի համակարգում ամրապնդման դեպքերը:

Այս ենթագլխում առանձնացրել ենք անգլերենի օրինաչափությունների խախտումով կազմված 14 (***friendly*, *governorhood*, *lovelily*, *lonelily*, *ministerhood*, *sillily*, *stealer*, *swimathon*, *undirty*, *unfoolish*, *ungood*, *unhate*, *un-understandable*, *unpessimistic***) ածանցյալ բառերի գործածություն և անգլալեզու լրագրանյութերում: Նշված բառային միավորները կազմվել են բառատեղծման համակարգում առկա հնչույթաբանական, իմաստաբանական և գեղագիտական գործոնների անտեսմամբ, որն իրագործվում է լրագրող-հեղինակի ստեղծագործ մտքի շնորհիվ՝ լեզվանյութին դիպուկություն և, արտահայտչականություն և, պատկերավորություն և

⁸ <http://www.oxforddictionaries.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://dictionary.cambridge.org> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.ldoceonline.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.merriam-webster.com> 30.07.2016-ի դրությամբ.

⁹ Davies M. (2008-) *The Corpus of Contemporary American English (COCA): 520 million words, 1990-present*. Available online at: <http://corpus.byu.edu/coca/> 30.07.2016-ի դրությամբ.

Davies M. (2013) *Corpus of Global Web-Based English: 1.9 billion words from speakers in 20 countries (GloWbE)*. Available online at: <http://corpus.byu.edu/glowbe/> 30.07.2016-ի դրությամբ.

հուզականությունն հաղորդելու և ինքնատիպությունն դրսևորելու նպատակադրումով:

Բառարանային լեզվանյութի քննությունը ցույց է տալիս, որ *stealer, sillily, friendlily, lovelily* անանցյալ ներք գետեղվել են *Oxford Dictionaries Online* և *Merriam-Webster Dictionary Online* բառարաններում, *lonelily* անանցյալը՝ միմիայն *Merriam-Webster Dictionary Online* բառարանում, իսկ *un-* նախածանցով կազմված *undirty, unfoolish, ungood, unhate, unpessimistic, un-understandable* բառերը և *ministerhood, governorhood, swimathon* անանցյալ ներք դեռևս չեն համալրել նշված բառարանների բառաֆոնդը¹⁰:

Այս ենթագլխում իրականացվել է նաև ժամանակակից անգլերենի՝ *Corpus of Contemporary American English (COCA)* և *Global Web-Based English (GloWbE)* կորպուսների ուսումնասիրությունն, որոնց տրամադրած վիճակագրական տվյալների շնորհիվ առավել հստակ պատկերացում ենք կազմում բառաստեղծման սահմանափակումներով կազմված բառերի դիպվածային կարգավիճակի մասին: Ստացված տվյալները վկայում են, որ ամենաբարձր հաճախականությունն ունեն *stealer* (COCA - 77, GloWbE - 77) և *ungood* (COCA - 4, GloWbE - 47) անանցյալ ներքը¹¹, իսկ մյուս անանցյալ ներք դեռևս բացակայում են տվյալ կորպուսների բառացանկից:

Երրորդ գլուխը, որը վերնագրված է «**Բարդ դիպվածային բառերի իմաստալատուցվածքային առանձնահատկությունները**», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում («**Բարդ դիպվածային բառերը և դրանց զարգացումը**») վերլուծվում են անգլալեզու լրագրանյութերից քաղված բարդ դիպվածային բառերը և ուսումնասիրվում է դրանց հանրայնացումը լեզվի համակարգում: Աշխատանքի այս ենթագլխում ևս բարդ բառային միավորները խմբավորել ենք ըստ բաղադրման կաղապարների, ապա վերլուծել անգլալեզու լրագրերից քաղված օրինակների հիման վրա: Այստեղ վերլուծվում են երկբաղադրիչ, եռբաղադրիչ և ավել բաղադրիչ ունեցող համադրական, գծիկով գրվող և հարադիր բարդությունների իմաստալատուցվածքային առանձնահատկությունները: Առանձնացված դիպվածային բառերում գերակշռում են

¹⁰<http://www.oxforddictionaries.com> 30.07.2016-ի դրոյն ժամբ, <http://www.merriam-webster.com> 30.07.2016-ի դրոյն ժամբ.

¹¹ Davies M. (2008-) *The Corpus of Contemporary American English (COCA): 520 million words, 1990-present*. Available online at: <http://corpus.byu.edu/coca/> 30.07.2016-ի դրոյն ժամբ.

Davies M. (2013) *Corpus of Global Web-Based English: 1.9 billion words from speakers in 20 countries (GloWbE)*. Available online at: <http://corpus.byu.edu/glowbe/> 30.07.2016-ի դրոյն ժամբ.

երկբադարձիչ հարադրու թյուները և սակավաթիվ են համարական կազմու թյուները: Բարդ բառային միավորները ներկայանում են բաղադրիչների և՛ ստորադասական, և՛ համադասական հարաբերությամբ: Առկա են նաև առանց գլխավոր բաղադրիչի բարդու թյուները: Լեզվանյութի ուսումնասիրությանը ները ցույց է տալիս նաև, որ բարդ բառային միավորների գերակշիռ մասում գլխավոր բաղադրիչը վերջնաբաղադրիչն է: Յետևապես, կարելի է փաստել, որ դրանք կազմվել են գերազանցապես *աջակողմյան գլխավոր բաղադրիչի կանոնի համաձայն*¹²: Բարդ դիվիզային բառերում (111) քանակական առումով գերակշռում են գոյականական կազմու թյուները (107), սակավաթիվ են ածականները (1) և բայերը (3):

Այս ենթագլխում քննության առնված 111 բարդ բառային միավորներից 23-ն ընդգրկվել են անգլերեն միալեզու բացատրական բառարաններում¹³: Ուսումնասիրված կորպուսներում ամենամեծ հաճախականությունն ունեն *big data* (COCA - 247, GloWbE - 247), *Ministry of Truth* (COCA - 11, GloWbE - 156), *(the) new normal* (COCA - 140, GloWbE - 140), *crony capitalism* (COCA - 126, GloWbE - 126) և *crowdfunding* (COCA - 118, GloWbE - 118) բառային միավորները¹⁴: Իսկ 111 բարդ բառային միավորներից 67-ը բացակայում են տվյալ կորպուսներում:

Բարդ բառային միավորներում առկա են բառեր, որոնք կազմվել են լեզվի բառաֆունդում արդեն իսկ առկա բառերի համաբանությամբ: Այսպես, *breadwinner* բառը կազմվել է *breadwinner* բառի համաբանությամբ, *brass ceiling* բառային միավորը՝ *glass ceiling* բառային միավորի համաբանությամբ, *dumbphone* բառը՝ *smartphone* բառի համաբանությամբ, *frost*

¹² Անգլերեն բարդ բառերում գլխավոր բաղադրիչը սովորաբար վերջնաբաղադրիչն է, այն է՝ *աջակողմյան* բաղադրիչը: Նշված երևույթը անգլերեն լեզվաբանական գրականության մեջ ստացել է *The Right-Hand Head Rule (RHR)* անվանումը (տե՛ս Katamba F. & Stonham J. Morphology, Palgrave Macmillan, 2nd edition, 2006, p. 324):

¹³ <http://www.oxforddictionaries.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://dictionary.cambridge.org> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.ldoceonline.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.merriam-webster.com> 30.07.2016-ի դրությամբ.

¹⁴ Davies M. (2008-) *The Corpus of Contemporary American English (COCA): 520 million words, 1990-present*. Available online at: <http://corpus.byu.edu/coca/> 30.07.2016-ի դրությամբ.

Davies M. (2013) *Corpus of Global Web-Based English: 1.9 billion words from speakers in 20 countries (GloWbE)*. Available online at: <http://corpus.byu.edu/glowbe/> 30.07.2016-ի դրությամբ.

quake/frostquake բառային միավորը՝ *earthquake* բառի համաբանությամբ:

Բարդ բառային միավորներում, որոշ դեպքերում, արձանագրվում է *բաղադրյալ նույն* ռոմանական հնարը՝ *booth babe, bug-out bag, burn book, cat café, digital detox, double denim, Facebook facelift, (the) new normal, positive procrastination, power paunch, ring rain, silver spicer, site scraper, social supermarket, virtual vanity*.

Երկրորդ ենթազյուղում («**Դիպլոմային բառախառնուրդները և դրանց զարգացումը**») քննության են առնվում անգլալեզու լրագրանյութերից քաղված 40 բառախառնուրդներ և ուսումնասիրվում է դրանց հանրայնացումը և եզրվի համակարգում:

Դիպլոմային բառախառնուրդներում գերակշռում են «*Մարդիկ և հասարակություն*» (*People and Society*) և «*Գիտություն, տեխնոլոգիա և համակարգչի գործածություն*» (*Science, Technology, and Computing*) բառիմաստային և/կամ թեմատիկ խմբերին պատկանող բառերը: Ուսումնասիրված բառախառնուրդները կազմվել են երկու բառերի համակցումով և դրանց մեծամասնությունն աչքի է ընկնում իմաստային և կառուցվածքային հստակությամբ: Քննության առնված (40) բառախառնուրդների ճշգրիտ մեծամասնությունը գոյականներ են (39):

Քննության առնված (40) դիպլոմային բառախառնուրդներից 8-ը (*babymoon, bankster, boatel, Brexit, celebutante, filk, floordrobe, Grexit*) վերածվել են նորաբանությունների և համալրել անգլերեն միալեզու բացատրական բառարանների բառաֆոնդը¹⁵, իսկ գերակշիռ մասի դիպլոմային կարգավիճակը թեակն է (*uncertain between nonce and neologism or neither nonce nor neologism*):

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ *selfie* բառ-միավորը, որը երևան է եկել 2002թ.-ին¹⁶ և ընդգրկվել *Oxford Dictionaries Online* բառարանում 2012թ.-ին, գործածման բարձր հաճախականություն ունի անգլերենում, և դրա համաբանությամբ անգլերենում օրըստօրե երևան են գալիս նորանոր բառեր: Այդ բառերի շարքը համալրում են *belfie (bum+selfie), couple (couple+selfie), gelfie (gym+selfie), legsie/lelfie (leg+selfie)* և *yogi (yoga+selfie)* բառախառնուրդները, որոնք քաղված են *The Stuff, The Guardian* և *The Daily Mail*

¹⁵ <http://www.oxforddictionaries.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://dictionary.cambridge.org> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.ldoceonline.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.merriam-webster.com> 30.07.2016-ի դրությամբ.

¹⁶ <http://www.dailymail.co.uk/news/article-3061118/Australia-revealed-invented-word-selfie-2000-Aussie-phrases-words-added-Oxford-Dictionaries.html> 17.01.2017-ի դրությամբ.

պարբերականներից: Փաստենք, որ բառաշարքի *yogi (yoga+selfie)* բառախառնուրդը համանունության դրսևորում է, քանի որ նշված նորակազմությանը նույնազիր և նույնահունչ է *yogi* վերջածանցավոր բառի հետ:

Երրորդ ենթազխում («**Դիպլածային հապավումները և դրանց զարգացումը**») ներկայացրել ենք անգլալեզու լրագրանյութերից քաղված դիպլածային հապավումները, ապահատկորոշել դրանց հետագադիպլածային կարգավիճակը: Այստեղ քննության են առնվում 20 հապավումներ, որոնցից 3-ը (*BRIC, IoT, Mamil*) ամրագրվել են անգլերեն միալեզու *Oxford Dictionaries Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում¹⁷, իսկ գերակշիռ մասի (17) դիպլածային կարգավիճակը թեակն է: Բանն այն է, որ դրանք դեռևս վկայված չեն անգլերեն բառարաններում, բայց կիրառվել են առցանց տարբեր հրատարակումներում:

Եզրակացության մեջ ամփոփվում են նուսումնասիրության հիմնական արդյունքները.

1. Դիպլածային բառերի միջոցով առավել հստակ է ձևակերպվում լրագրողի գնահատողականությանը, որը միտված է ընթերցողին հետաքրքրելուն և ուշադրությանը ինդրի վրա սենտելուն: Դիպլածային բառերը հաղորդվող նյութը դարձնում են առավել պատկերավոր, արտահայտիչ և հուզական, որն էլ դրանց ոճական արժեքն ապահովող գործոնն է: Լրագրանյութերում դիպլածային բառերի երևանգալը պայմանավորված է նաև խոսքաշարի երկարաշունչ բառակապակցությանները հակիրճ՝ մեկ բառով, ներկայացնելու միտմամբ: Յետևապես, բառային բազմանդամ կապակցությաններին փոխարեն ստեղծվում են նոր բառային միավորներ: Արդյունքում, դիպլածային բառերի մեծամասնությանը նկարագրորեն մեկնաբանվող կազմությաններ են, և դրանքին չէ մեկ բառով թարգմանել կամ սահմանել դրանք:
2. Լրագրանյութերում գործածված դիպլածային բառերը իրացնում են *անվանողական-ծանաչողական, համատեքստային-մետալեզվական, լեզվական միջոցների տեսուման, գնահատողական* և *գործաբանական գործառնյութերը* և առավել ապես հանդես են գալիս «*Մարդիկ և հասարակությանը*» (58), «*Գիտությանը*» և «*տեխնոլոգիա*» և *համակարգչի գործածությանը*» (66) թեմատիկ և/կամ բառիմաստային խմբերում:

¹⁷ <http://www.oxforddictionaries.com> 30.07.2016-ի դրույթամբ, <http://dictionary.cambridge.org> 30.07.2016-ի դրույթամբ.

3. Լրագրային խոսքաչարու մ նոր բառերը, որոնք ստեղծագործ մտքի արգասիք են, մերթընդմերթ գործածվում են անգլերենի օրինաչափուն ներքի խախտումով: Բառակազմական արդյունավետությանը և բառաստեղծումը խաթարող հիմնական հինգ գործոնները՝ հնչույթաբանական, ձևաբանական, իմաստաբանական, գեղագիտական, գործաբանական, երբեմն անտեսվում են լրագրող-հեղինակների կողմից, և անգլալեզու պարբերականներում ի հայտ է գալիս անգլերենի լեզվական կանոնների սահմանափակումներով կազմված բառային միավորների գործածություն (14 բառային միավոր):
4. Քննության արևված նախածանցավոր բառերի կազմումը մեծամասամբ իրականացվում է բաղադրյալ հիմքով կաղապարներով (նախածանց+ածանցավոր բառ, նախածանց+բարդ ածանցավոր բառ), իսկ վերջածանցավոր նոր բառերինը՝ պարզ հիմքով կաղապարով (արմատ+վերջածանց): Ընդ որում, վերջածանցավոր բառերում մեծաթիվ են *-ing* վերջածանցով բաղադրված բայանուն գոյականները (8): Բառաբարդման եղանակով կազմված բառային միավորներում ամալել գործուն են «գոյական+գոյական» և «ածական+գոյական» բառակազմական կաղապարները:
5. Դիպլոմային բարդ բառային միավորների շրջանում երկբաղադրիչ հարադրությունները (84) գերազանցում են երկբաղադրիչ համարական կազմություններին (9), գծիկով գրություն ունեցող բարդ բառերին (3), եռբաղադրիչ, քառբաղադրիչ և հնգբաղադրիչ կազմություններին (15): Ընդ որում, բառաբարդման եղանակով կազմված բառային միավորներում քանակապես գերակշռում են բաղադրիչների ստորադասական հարաբերությամբ կապված հարադրությունները: Առկա են այնպիսի բարդ բառեր, որոնց բաղադրիչներից մեկը բարդության մեջ հանդես է գալիս նոր նշանակության և կամ հարանշանակության ամբ: Քննության արևված բարդ բառային միավորներում ամկա են այնպիսի լեզվամիավորներ, որոնցում դրսևորվում է *բաղածայ նույթ* ոճական հնարը, որն էլ նորաստեղծ բառը դարձնում է ամալել բարեհունչ (15 բառային միավոր):
6. Լրագրանյութերում երևան եկած դիպլոմային հապավումները լեզվական միջոցների տնտեսման հետևանքով արաջ եկած լեզվական միավորներ են՝ հաղորդվող բառիմաստն ամալել հակիրճ ներկայացնելու նպատակով: Ուսումնասիրված

հասպվում մների շրջանում (20) արձանագրում ենք համանուն ունեյուն՝ սույն աշխատանքում առանձնացված հասպվում մների և անգլերեն բառարաններում վկայված համանուն և էգզվամիավորների միջև (6 հասպվում):

7. Ուսումնասիրված դիպվածային բառային միավորների (232) գերակշիռ մասը գոյականական կազմվածություններ են (204), սակավաթիվ են ածականները (18), բայերը (6) և մակբայները (4): Քննության առնված բառային միավորներից 13-ը կազմվել են էգզվական համաբանությամբ՝ էգզվում արդեն առկա բառերի նմանությամբ, իսկ բառախառնություններում առկա են նաև *selfie* բառի լայնորեն ճյուղավորված բառակազմությունները:
8. Առանձնացված դիպվածային բառերի գերակշիռ մասի դիպվածային կարգավիճակը թեական է (176), քանի որ դրանք քանիցս գործածվել են լրագրանյութերում և առցանց հրատարակումներում, բայց դեռևս չեն ընդգրկվել ուսումնասիրված անգլերեն բառարաններում: Իսկ քննության առնված դիպվածային բառերից 134-ը (չհաշված հասպվումները) բացակայում են COCA և GloWbE կորպուսներում:

Այսպիսով, կարելի է փաստել, որ անգլերենի բառային կազմը լրագրանյութերում նորացվում է՝ նոր հասկացություններ, առարկաներ և գիտական նորագույն նվաճումներ անվանելու համար, իսկ դիպվածային բառերը մեծամասամբ չեն մնում դիպվածային կարգավիճակում, այլ վերածվում են նորաբանությունների: Կարծում ենք, որ լրագրանյութերում գործածված դիպվածային բառերի գերակշիռ մասը լրագրողի անհատական հեղինակային նորաբանություններ չի կարելի համարել երկու պատճառով՝ առաջին՝ մեկ լրագրանյութին անմիջապես հետևում է միևնույն բովանդակությամբ մեկ այլ լրագրանյութ, առցանց մեկ այլ հրատարակում, հետևապես դժվար է հատկորոշել դրանց գործածության սկզբնաղբյուրը, երկրորդ՝ գիտական նորարարությունների շարադրանքներում լրագրող-հեղինակները գործածում են էգզվական հանրության երբեմն անհայտ, բայց գիտնականների հեղինակած նոր՝ դիպվածային բառեր: Տվյալ պարագայում՝ անհատական հեղինակային նորաբանությունը պատկանում է գիտական նոր իրականությունն անվանած գիտնականին, իսկ լրագրող-հեղինակը առաջինն է հրատարակում այն: Առավել ճշգրիտ կլիներ լրագրանյութերում գործածված դիպվածային բառերը որակել որպես ներգործ բառեր:

Եզրափակելով նշենք, որ մեկ աստեղախոսության շրջանակներում հնարավոր է անդրադառնալ լրագրանյութերում գործածված բոլոր դիպվածային բառային միավորներին, հետևապես ստացված արդյունքներն ու մշակված լեզվանյութը հիմք կարող են հանդիսանալ հետագա ուսումնասիրության ներկայացված Գրականության և գանկում ներկայացված Ե աստեղախոսության ընթացքում օգտագործված գրականությանը, բառարանները և համացանցային աղբյուրները: **Յավելվածներում** ներկայացված Ե լրագրանյութերից քաղված դիպվածային բառային միավորների լրացուցիչ ցանկ:

Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրատարակումներում.

1. On the Potential Words and the Role of Adjectival Suffixes in Present Day English Word-building // Բանբեր, Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊԼՀ «Լինգվա» հրատարակչություն, Երևան, 2012, համ. 1 (19), էջ 114-124:
2. Some Constraints in the Process of Nonce Word Creation (on the material of English newspapers) // Բանբեր, Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊԼՀ «Լինգվա» հրատարակչություն, Երևան, 2013, համ. 1 (27), էջ 49-60:
3. Sociolinguistic Factors of New Formations in English (social need, borrowings) // Բանբեր, Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊԼՀ «Լինգվա» հրատարակչություն, Երևան, 2013, համ. 1 (28), էջ 125-141:
4. Նորաբանության ներքինի մաստային դաշտի և ձևաբանության վերլուծությունը անգլալեզու առցանց լրագրային հոդվածներում // Բանբեր, Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊԼՀ «Լինգվա» հրատարակչություն, Երևան, 2015, համ. 1 (32), էջ 118-125:
5. Դիպվածաբանության ներքինի մաստակառուցվածքային առանձնահատկությունները անգլալեզու լրագրանյութերում // Բանբեր, Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊԼՀ «Լինգվա» հրատարակչություն, Երևան, 2015, համ. 1 (34), էջ 113-122:
6. Յեղիականային նորաբանությունները Ջորջ Օրուելի «1984» վեպում և դրանց վերստեղծումը անգլալեզու լրագրերում // Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ, «Լինգվա» հրատարակչություն, պրակտ, 2016, էջ 185-192:
7. The Semantic and Structural Features of Nonce Blends (on the material of English journalistic articles) // Բանբեր, Գիտական

հոդվածների ժողովածու, ԵՊԼՀ «Լինգվա»
հրատարակչություն, Երևան, 2016, համ. 1 (38), էջ 150-159:

GAYANE ANDRANIK BARSEGHYAN
THE SEMANTIC-STRUCTURAL CHARACTERISTICS OF NONCE WORDS
(with special reference to English printed and online journalistic articles)

SUMMARY

The dissertation explores the semantic-structural characteristics of nonce words, used in English journalistic articles, and analyzes the cases of their lexicalization and socialization. The lexicographical graveyard is crowded with newly-coined words or new senses of existing words that are introduced into the English language, for the purpose of naming new objects, concepts and phenomena. To reflect the reality effectively, the journalists make use of nonce or occasional words, which serve the purpose of drawing the readers' attention and making the news report more expressive and emotive-evaluative.

The research **aims** at the semantic-structural analysis of nonce words used in English newspapers and magazines.

To achieve the aim of the research, the following **objectives** are set forth:

- to investigate the approaches to the terms neologism and hapax legomena/nonce word/occasionalism in linguistic literature,
- to investigate and systematize the factors hampering the process of word-building,
- to reveal the part of speech classification of the nonce words under study and their appurtenance to different lexico-semantic thematic groups,
- to reveal the frequency of occurrence of the words under study,
- to define the functions of nonce words in English journalistic articles,
- to determine the nonce status of the words under study.

To realize the above-mentioned objectives, the descriptive, componential and statistical **methods** of analysis have been applied to the research.

The **theoretical significance of the research** lies in the fact that the given study can contribute to further semantic-structural investigations of new words in English.

The **practical value of the research** is conditioned by the fact that the results of the research can be used in the courses of Lexicology, Semantics and Text Analysis, as well as in compiling university textbooks and dictionaries.

The **topicality of the research** is conditioned by the fact that the revelation of new words is of paramount importance in the language picture of the world. Each year hundreds of new words and semantic neologisms emerge, most of them make their way into English dictionaries. Therefore, the topicality of the research hinges on the demand for the analysis of the means that enrich the English language.

The **novelty of the research** is determined by the new and comprehensive study of nonce words singled out from English journalistic articles. Here for the first time the nonce words, the formation of which is blocked by phonetic, semantic, morphological, pragmatic and aesthetic factors, are distinctly singled out and analyzed. Moreover, the data provided by the

corpus analysis have enabled us to determine the nonce status or frequency of use of the nonce words under study.

The purpose and objectives determined the structure of the work, which consists of an introduction, three chapters, a conclusion, references and appendices.

Chapter I lays out the theoretical dimensions of the research and provides an overview of various approaches to the understanding of new words in Western, Soviet and Armenian linguistics. This chapter also outlines the main factors (phonetic, semantic, morphological, pragmatic and aesthetic) that block the formation of words in English. A detailed account of these factors is given on the basis of modern linguistic studies.

Chapter II dwells on the semantic-structural analysis of nonce words, formed through affixation (prefixation and suffixation). This chapter also studies the nonce words which were formed disregarding the rules that block and hamper the process of creating new words in English.

Chapter III analyses compound nonce words from the semantic-structural point of view. Here nonce compounds, blends, abbreviations and acronyms are distinctly examined. Both Chapter II and Chapter III identify the nonce status of the words under study and reveal the cases of socialization and frequency of their occurrence based on the data provided by corpus analysis (Corpus of Contemporary American English (COCA), Corpus of Global Web-Based English (GloWbE)) and English monolingual dictionaries.

Conclusion summarizes the findings of the research exposed in the present dissertation.

ГАЯНЕ АНДРАНИКОВНА БАРСЕГЯН
СЕМАНТИЧЕСКИЕ И СТРУКТУРНЫЕ ОСОБЕННОСТИ
ОККАЗИОНАЛИЗМОВ

(на материале английских онлайн и печатных журналистских статей)

РЕЗЮМЕ

Данная диссертационная работа посвящена изучению семантических и структурных особенностей окказионализмов в английских журналистских статьях. Определенные семантические и структурные особенности окказионализмов придают контексту стилистическую окраску и эмоциональную выразительность, повышая интерес читателей к журналистским статьям.

Целью работы является выявление структурных и семантических характеристик окказионализмов.

Реализация цели достигается путем решения следующих **задач**:

- провести всестороннее исследование неологизмов и окказионализмов и дать определение этим понятиям;
- исследовать основные факторы, блокирующие образование окказионализмов в английском языке;
- выявить к каким частям речи и лексико-семантическим тематическим группам относятся окказионализмы;
- определить различные функции окказионализмов;
- определить окказиональный статус изучаемых слов, а именно: остается ли данный окказионализм таким, каким был или становится частотным.

В работе были применены следующие лингвистические **методы**: метод компонентного анализа, а также метод описательного и статистического анализа.

Теоретическая значимость исследования определяется тем, что результаты данного исследования могут способствовать дальнейшему исследованию окказионализмов английского языка.

Практическая ценность исследования состоит в том, что результаты диссертации могут быть использованы в лексикологии, семасиологии и анализе текста, а также при составлении университетских учебников и словарей.

Актуальность работы обусловлена большим интересом к выявлению новых слов в языковой картине мира и к исследованию средств, которые обогащают английский язык.

Научная новизна исследования определяется комплексным подходом к изучению семантико-структурных характеристик окказионализмов на материале английских журналистских статей. Впервые анализируются окказиональные слова, которые считаются неправильно образованными словами с фонетической, морфологической, семантической и эстетической точки зрения. В работе также уточняется окказиональный статус изучаемых слов.

Данная диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы и приложений.

Во **Введении** представлены актуальность и научная новизна исследования, определяются их цель и основные задачи, описывается теоретическая значимость и практическая ценность работы, даётся характеристика методов исследования материала.

В **первой главе** проводится обзор работ, посвященных неологизмам и окказионализмам, также уточняются и определяются термины «неологизм» и «окказионализм».

Во **второй главе** рассматриваются аффиксальные (префиксальные и суффиксальные) окказионализмы с семантической и структурной точки зрения. В этой главе также определяются и выявляются случаи проникновения окказионализмов в английских одноязычных словарях.

В **третьей главе** проводится тщательный анализ сложных окказионализмов с семантической и структурной точки зрения, также определяются и выявляются случаи проникновения окказионализмов в английских одноязычных словарях.

В **Заключении** представлены результаты проведенного исследования.